ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N [04]

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. սեպտեմբերի 16-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Հրավիրվածներից նիստին մասնակցում էր

Արգիշտի Պետրոսյանը	**«Վան» թիմի ֆուտբոլիստ՝ օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում:**

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի փոխնախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **17/08/21թ. «Ալաշկերտ-2»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ010) խաղի մասին. Ալաշկերտ-2-Արարատ-Արմենիա-2 խաղը սկսվեց 25 րոպե ուշացումով՝ շտապ օգնության անձնակազմի ուշանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» ակումբի կողմից՝ որպես դաշտի տեր ակումբի, կարգապահական խախտում թույլ տալը և, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ

կոդվածի 41-րդ կետով, որոշեց «Ալաշկերտ-2» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»։

2. **25/08/21թ. «Արարատ-Արմենիա»-«Նոա» (ՊԼ025) խաղի մասին.**
   Խաղի 55-րդ րոպեին «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ N6 Վբեյմար Անգուլոն մրցակցի նկատմամբ կոպիտ խաղաց, մոտակա խաղադադարին նրա փոխարեն մրցավարը դեղին քարտ ցույց տվեց «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ N27 Ֆուրջել Նարսինգին:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Մրցավարական և Տեսչական կոմիտեի կողմից տրված եզրակացությունը՝ հաստատված համարել ֆուտբոլիստին սխալմամբ դեղին քարտ ցույց տալը մեկ այլ ֆուտբոլիսիտի փոխարեն, և ղեկավավելով ՀՖՖ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 11.02 կետով և 33-րդ հոդվածի 33.10 կետով՝ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ N27 Ֆուրջել Նարսինգի զգուշացումը հանել և նշանակել ֆուտբոլիստ N6 Վբեյմար Անգուլոյին։

3. **12/09/21թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ027) խաղին՝ «Վան» թիմի ֆուտբոլիստ Արգիշտի Պետրոսյանի (N 11205) հեռացման մասին (բռնարարք. մրցակցին քաշքշելու համար):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Վան» թիմի ֆուտբոլիստ Արգիշտի Պետրոսյանի (N 11205) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Վան» թիմի ֆուտբոլիստ Արգիշտի Պետրոսյանին որակազրկել 2 խաղով և «ՖԱ Վան ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կանոնակարգ 25.04 կետի համաձայն.
«VBET ՀԳԽ խաղերին ստացված զգուշացումների հաշվարկը կատարվում է առանձին»։

ՀՖՖ Կանոնակարգ 25.09 կետի համաձայն.
«Հեռացման արդյունքում որակազրկված ֆուտբոլիստը բաց է թողնում համապատասխան քանակի խաղ այն առաջնությունում, որտեղ նա հեռացվել է խաղադաշտից։ Ընդ որում, եթե ֆուտբոլիստը հեռացվել է խաղադաշտից VBET ՀՊԼ- ում, ապա վերջինս չի կարող մասնակցել ԱԽ-ի առաջնության խաղերին եւ հակառակը՝ մինչեւ որակազրկման ժամկետի /խաղերի քանակի/ լրանալը այն առաջնությունում, որտեղ վերջինս հեռացվել է խաղադաշտից՝ միաժամանակ իրավունք ունենալով մասնակցել Ֆուտզալի առաջնության խաղերին։

4. **12/09/21թ. «Վան»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ027) խաղին՝ «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի (N 38009) հեռացման մասին (բռնարարք. մրցակցին քաշքշելու և հայհոյելու համար):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովի (N 38009) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշովին որակազրկել 3 խաղով և «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

5. **11/09/21թ. «Նորավանք»-«Նոա» (ՊԼ026) խաղի մասին.**
   Հյուր թիմի երկրպագուները թիմի գոլից հետո (90+3') պայթուցիկ պայթեցրեցին:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

1) ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետով՝ «Նոա ՖԱ ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով,

2) ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետով՝ «Նորավանք ՍԱ ՍՊԸ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

6. **11/09/21թ. «Արարատ»-«Ալաշկերտ» (ՊԼ030) խաղի մասին.**
   Խաղի 70-րդ րոպեին, երբ երկրորդ զգուշացման համար հեռացվեց «Արարատ» թիմի N10 ֆուտբոլիստ՝ Սերժ Դեբլեն անմիջապես հետո հետևեց վիրավորանք մրցավարի հասցեին:

Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 4 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի N10 ֆուտբոլիստ Սերժ Դեբլենի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետով՝ «Արարատ» թիմի N10 ֆուտբոլիստ Սերժ Դեբլեի որակազրկել 17/09/2021թ. մինչև 19/10/2021թ. ներառյալ, և «Արարատ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Փոխնախագահ՝ Ռուբեն Սինոյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

Հիշեցում՝

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: